ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/70

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոք բերող՝«Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա

Երրորդ անձ՝ «Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա

Մասնակցությամբ՝

«Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

«Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ի ներկայացուցիչ՝ Ա. Միրզոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցում, ուշահաս բանջարեղենի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի, (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 01.10.2019թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ն ներկայացրած բողոքով խնդրել է՝ դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.10.2019թ.-ին, իսկ 02.10.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ ու 07.10.2019թ.-ին, 16.10.2019թ.-ին և 24.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

16.10.2019թ. -ին «Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.10.2019թ.-ին:

2. <u>«Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար <<Ուշահաս բանջարեղենի>> ձեռքբերման նպատակով հայտարարվել է <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնանշման հարցում /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերոհիշյալ ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև Ֆ/Ա Եղիշե Գևորգյանը:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. թիվ 3 արձանագրության 2.3 կետի՝ մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին /պահանջներին/:

Իսկ արդեն նույն թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանը երկրորդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ֆ/Ա Բագրատ Միրզոյանի կողմից <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժո-ղովին 03.09.2019թ. ուղված գրության քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշել է Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի հայտով ներկայացված փաստաթղթերի թվային էլեկտրոնային ստորագրության վավերականության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով դիմել <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ:

Վերջինիս կողմից 13.09.2019թ. տրված եզրակացության համաձայն՝ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի ներկայացված գնային առաջարկը /Հավելված 5/ չի պարունակում վավեր թվային ստորագրություն:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետը՝ <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը 16.09.2019թ. որոշեց մերժել Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի ներկայացված հայտը:

Համաձայն <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ի 13.09.2019թ. տրված եզրակացության. <<Ի պատասխան Ձեր՝ 2019 թվականի սեպտեմբերի 13-ի գրության՝ հայտնում ենք, որ Ձեր գրությանը կից ուղարկված փաստաթուղթը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնային առաջարկը, չի պարունակում վավեր թվային ստորագրություն>>:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացին կազմակերպման մասին>> կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով

իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ արդեն իսկ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում էին <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, խախտելով Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.2 ենթակետը, այն է՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում, 06.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ֆ/Ա Բագրատ Միրզոյանի կողմից <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 03.09.2019թ. ուղված գրության քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշել է Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի հայտով ներկայացված փաստաթղթերի թվային էլեկտրոնային ստորագրության վավերականության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով դիմել <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ին: Վերջինիս կողմից 13.09.2019թ. տրված եզրակացության համաձայն՝ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի ներկայացված գնային առաջարկը /Հավելված 5/ չի

պարունակում վավեր թվային ստորագրություն և արդյունքում գնահատող հանձնաժողովը 16.09.2019թ. որոշեց մերժել Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի ներկայացված հայտը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նախ, գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի կողմից ներկայացված հայտով ներկայացրած փաստաթղթերը <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատելուց հետո, հիմք ընդուներ մեկ այլ մասնակցի կողմից ներկայացված գրությունը, հարցում կատարեր <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ այն պարզ պատճառով, որ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ հստակ սահմանվել է, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Եվ այսպես, համաձայն <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝ հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 29.08.2019թ. ժամը 10:00, իսկ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի կողմից ներկայացված հայտով ներկայացրած փաստաթղթերը <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան է գնահատվել նույն 29.08.2019թ. և, հետևաբար, գնահատող հանձնաժողովը իրավունք ուներ մերժել Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի կողմից ներկայացված հայտը մինչև 03.09.2019թ. ժամը 10:00-ն, այնինչ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի կողմից ներկայացված հայտը մերժվել է 16.09.2019թ., այսինքն՝ հրավերով սահմանված հայտերի վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ աշխատանքային օրը:

Մյուս մասով ցանկանում ենք անդրադառնալ այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կատարված հարցմանն ի պատասխան <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը՝ Ի պատասխան Ձեր՝ 2019 թվականի սեպտեմբերի 13-ի գրության՝ հայտնում ենք, որ Ձեր գրությանը կից ուղարկված փաստաթուղթը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնային առաջարկը, չի պարունակում վավեր թվային ստորագրություն:

Մեր համար առնվազն անհասկանալի է այն հանգամանքը, որ նման չհիմնավորված և վերացական գրությունը հիմք ընդունելով՝ գնահատող հանձնաժողովը ինչպես է որոշում կայացրել մերժելու Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի կողմից ներկայացված հայտը,

քանզի, նախ, եզրակացությունից հստակ չի երևում, որ խոսքը գնում է հենց Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին: Բացի այդ, <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ի կողմից ընդամենը վերացական նշվել է, որ նշված ստորագրությունը վավեր չէ, բայց, թե ինչով վավեր չէ, ինչն է դրա պատճառը, այսինքն որևէ հիմնավորում, վերոհիշյալ գրությունում միանգամայն բացակայում է:

Ստացվում է, որ <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված ցանկացած, ոչնչով չհիմնավորված, վերացական գրություն կարող է հիմք հանդիսանալ գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու համար, ընդ որում, առաջին տեղ զբաղեցնող և ավելի էժան գին առաջարկած մասնակցի համար:

Եվ հաշվի առնելով հենց այս կասկածելի գործողությունները, որ 03.09.2019թ. մեկ այլ մասնակցի կողմից, որը նույնիսկ 2-րդ չափաբաժնի մասով չի ճանաչվել նույնիսկ 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից՝ գրություն է ներկայացվել գնահատող հանձնաժողովին, որ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանին կողմից ներկայացված գնային առաջարկը չի պարունակում վավեր թվային ստորագրություն, որը այնուհետև հիմք ընդունելով՝ գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ և հենց <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված եզրակացությունը հիմք ընդունելով մերժել Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի հայտը՝ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի կողմից որոշում է կայացվել դիմել <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ին ստանալու համար հիմնավորված պատասխան, թե ինչու գնային առաջարկը չի պարունակել վավեր թվային ստորագրություն:»:

Ելնելով վերոգրյալից, «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.10.2019թ.-ի գրությամբ դիմել ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Եղիշե

Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից 01.10.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 10.10.2019թ.-ին թիվ Մ-44860-2019 գրությամբ ներկայացրել է գրությամբ պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար ուշահաս բանջարեղենի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացվել Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը, Ֆ/Ա Բագրատ Միրզոյանը և Ֆ/Ա Եղիշե Գևորգյանը:

Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշմամամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջների՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի ներկայացրած հայտի վերաբերյալ նույն ընթացակարգի մասնակից Ֆ/Ա Բագրատ Միրզոյանի կողմից ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 03.09.2019թ. ուղղված գրության քննարկման արդյունքում՝ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջները, որոշել է Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի հայտով ներկայացված փաստաթղթերի թվային էլեկտրոնային ստորագրության վավերականության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով դիմել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ: Վերջինիս կողմից 13.09.2019թ. տրված եզրակացության համաձայն՝ Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի ներկայացրած գնային առաջարկը (Հավելված N 5) չի պարունակում վավեր թվային ստորագրություն:

Հաշվի առնելով ներկայացված եզրակացությունը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ և 67-րդ կետերի պահանջները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց Ֆ/Ա Եղիշե Գևորգյանի հայտը մերժել:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

«Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ն 16.10.2019թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ֆիզիկական անձ Բագրատ Միրզոյանը հայտնում է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 21.08.2019թ.-ին հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67 ծածկագրով գնանշման հարցմանը /այսուհետ՝ նաև ընթացակարգ/, որը պետք է իրականացվեր մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

29.08.2019թ. ըստ ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության.

- 1 կետի համաձայն՝ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ Ա/ձ Վյաչեսլավ Ամիրջանյան, ֆ/ա Բագրատ Միրզոյան և ֆ/ա Եղիշե Գևորգյան:

- 2.3 կետի համաձայն՝ մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերը հմապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին: (արձանագրությունը կցվում է):

02.09.2019թ. քանի որ ընկերությունը ակնհայտ նկատել էր, որ ֆ/ա Եղիշե Գևորգյանի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկը, չեն պարունակում վավեր թվային ստորագրություն /scrinshot-ը կցվում է/, գրությամբ դիմել «էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ), որը միակ լիազորված ընկերությունն է ՀՀ-ում, ով ֆիզիկական անձանց տրամադրում է էլեկտրոնային թվային ստորագրություններ /այդ թվում Ֆ/ա Եղիշե Գևորգյանին/, խնդրելով պատասխանել կցված փաստաթղթերը (ֆ/ա Եղիշե Գևորգյանի կողմից հաստատված հավելվածներ 3.1 և 5) հաստատված են արդյոք էլեկտրոնային թվային ստորագրությամբ /գրությունը կցվում է/, որին ի պատասխան <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ն հայտնել է, որ գրությանը կից ուղարկված փաստաթղթերը՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67 ծածկագրով Հավելված 5 և Հավելված 3, չեն պարունակում վավեր թվային ստորագրություններ:

03.09.2019թ. ընկերությունը գրությամբ դիմել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնելով, որ ֆ/ա Եղիշե Գևորգյանի կողմից PDF ձևաչափով ներկայացված բոլոր հավելվածները, այդ թվում նաև հավելված 5-ը /գնային առաջարկը/ չեն պարունակում վավեր թվային ստորագրություններ խնդրել ընթացակարգի հանձնաժողովին մերժի ֆ/ա Եղիշե Գևորգյանի կողմից ներկայացված հայտը, կցելով <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ին ուղված և <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ից ստացված գրությունները, ինչպես նաև կցելով նմանատիպ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 ծածկագրով մրցույթի արձանագրությունը, որի դեպքում անվավեր ստորագրությամբ հաստատված հայտը գնահատող հանձնաժողովը մերժեց /արձանագրությունները կցվում են/ և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.10.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/102 որոշում, որը վերաբերում է տվյալ դեպքին և որի համար նախադեպային է /որոշումը կցվում է/:

19.09.2019թ. թիվ 5 արձանագրության 2.1 կետի՝ ընթացակարգի (ՎԻՃԱՐԿՎՈՂ) 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել ֆիզիկական անձ Բագրատ Միրզոյանը

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործնթացի կազմակերպման մասին>> կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով

իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի.

7.19 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնա¬կիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստա¬թղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրա¬պետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

7.24 ենթակետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

7.22 ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

7.25 ենթակետի համաձայն՝ սույն հրավերի 1-ին մասի 7.24 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

Ընթացակարգի հրավերի 11-րդ կետի.

11.9 ենթակետի համաձայն՝ Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

11.14 ենթակետի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

<<Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին>> ՀՀ օրենքի՝

-13-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության և դրա ստուգման տվյալների պատկանելիությունը ստորագրող անձին հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրով, որը տրամադրում է հավաստագրման կենտրոնը:

-14-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը կարող է ունենալ գործողության ժամկետ: էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի գործողության ժամկետը լրանալու պահից հետո տվյալ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը չեն համարվում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ԷԿԵՆԳ-ը հանդիսանում է Հայաստանում միակ հավատարմագրված Հավաստագրման կենտրոնը: Հավաստագրման կենտրոնը էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրեր տրամադրող և էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված այլ ծառայություններ մատուցող կազմակերպություն է, որը կառավարում է հավաստագրերի կենսացիկլը՝ ներառյալ գեներացումը, չեղարկումը, ժամկետի լրացումն ու թարմացումը:»:

Ելնելով վերոգրյալից, «Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Թողնել անփոփոխ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 06.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը,

հակառակի դեպքում.

1.1 Դադարեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը,

1.2 Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին մերժել «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի հայտը:

5. <u>ԳԲՔԱ-LO-2019/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուշահաս բանջարեղենի ձեռքբերման նպատակով 21.08.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ն և «Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ն:

«Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ն 02.09.2019թ.-ին դիմել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲ ընկերությանը՝ (այսուհետ՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ) կցելով «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից ներկայացված թիվ 3 հավելվածը և թիվ 5 հավելվածը և խնդրել է հայտնել, արդյոք կցված փաստաթղթերը հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ի պատասխան վերոնշյալ գրության, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն հայտնել է, որ ուղարկված փաստաթղթերը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով թիվ 3 հավելվածը և թիվ 5 հավելվածը չեն պարունակում վավեր թվային ստորագրություններ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Բագրատ Միրզոյան» Ֆ/Ա-ն դիմել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և խնդրել է մերժել «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.09.2019թ.-ին նույնաբովանդակ գրությամբ դիմել է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին, որի վերաբերյալ կրկին ստացվել է պատասխան այն

մասին, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով թիվ 3 հավելվածը և թիվ 5 հավելվածը չեն պարունակում վավեր թվային ստորագրություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), 06.09.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության՝ «Բագրաւո Միրզոյան» Ֆ/Ա-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 03.09.2019թ.-ին ուղղված գրության քննարկման արդյունքում, Հանձնաժողովը որոշել է «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի հայտով ներկայացված փաստաթղթերի թվային էլեկտրոնային ստորագրության վավերականության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով դիմել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին: Վերջինիս կողմից 13.09.2019թ.-ին տրված եզրակացության համաձայն «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի ներկայացրած գնային առաջարկը (Հավելված N 5) չի պարունակում վավեր թվային ստորագրություն:

Ելնելով վերոգրյալց և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետը՝ Հանձնաժողովը 16.09.2019թ.-ին որոշել է մերժել «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի հայտը:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից «Բագրաւո Միրզոյան» Ֆ/Ա-ի 23.10.2019թ.-ին տրված գրության համաձայն՝ «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի ներկայացված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով թիվ 5 հավելվածը չի պարունակում վավեր թվային ստորագրություն:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից 03.10.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ ... էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19 կետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընդ որում գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ կառավարության 01.03.2018թ.-ի N 285-Ն որոշմամբ հաստատված «նույնականացման քարտում զետեղվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկումից բացի այլ տեսակի նյութական կրիչներում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկման և տրամադրման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն, որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

Նույն կարգի արդեն 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրամադրման նախապայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կացության քարտի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված նույնականացման քարտի, հանրային ծառայության համարանիշի կամ վերջինս չստանալու վերաբերյալ տեղեկանքի, ինչպես նաև թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարի կատարման մասին անդորրագրի ներկայացումը:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ կանոնադրության 7-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընկերության խնդիրներն են մինչև կենտրոնացված հավաստագրման կենտրոնի ստեղծումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, իրավաբանական անձանց և պետական մարմիններին էլեկտրոնային ստորագրության հավաստագրման ծառայությունների տրամադրումը:

Վերոնշյալ նորմերի դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ էլեկտրոնային թվային ստորագրության օգտագործումը թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ, որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուշահաս բանջարեղենի ձեռքբերման նպատակով 21.08.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ն չի ունեցել օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային թվային ստորագրության վավեր հավաստագիր, որի բացակայության պայմաններում ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթը պետք է դիտարկել ոչ պատշաճ, հիմք ընդունելով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկատվությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնային առաջարկը «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից ստորագրվել է անվավեր հավաստագրով, ուստի չի կարող համարվել պատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթուղթ, իսկ որի՝ գնային առաջարկի ստորագրության բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա էր մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի բողոքում նշված այն պնդմանը, որ գնահատող հանձնաժողովն իրավունք չուներ հիմք ընդուներ մեկ այլ մասնակցի կողմից ներկայացված գրությունը և հարցում կատարեր «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին՝ «Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատելուց հետո, քանի որ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ հստակ սահմանվել է, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ապա այս մասով Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր

եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, ուստի տվյալ պարագայում Հանձնաժողովի գործողությունները եղել են իրավաչափ և բխել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Եղիշե Գևորգյան» Ֆ/Ա-ի կողմից 03.10.2019թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/70 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**